Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Ուսուցիչ՝ Սահակյան Արևհատ

Դպրոց՝ Գառնիի N2 Ավագ դպրոց

Աշխատանքի ղեկավար՝ Դոնարա Ղազարյան

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն 3
Գլուխ 1. Լեզվի օգտագործման ոլորտները 5
Գլուխ 2. Փոխներգործության ռազմավարություններ 10
Եզրակացություն 16
Օգտագործված գրականության ցանկ 17

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Գաղտնիք չէ, որ լեզուն սովորելու և սովորեցնելու բազմաթիվ ժամանակակից ուղիներ կան: Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների և մեթոդների վերանայում, կրթության նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում: Արագընթաց փոփոխությունների, նոր արժեքների այդ հորձանուտում երիտասարդ սերունդը դժվարանում էր իր համար արժեքային կողմնորոշումներ ձևավորել: Աշխատանքում շեշտադրվել է հանրակրթական ուսումնական հաստատություններում օտար լեզու սովորեցնելու, այն աշակերտներին ավելի դյուրին և մատչելի հրամցնելու ուղիների ներկայացումը, որն էլ այդ համատեքստում նպաստում է նրանց արժեհամակարգի ձևավորմանը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակն է ներկայացնել և ուսումնասիրել հանրակրթական դպրոցներում օտար լեզուներ սովորեցնելու միջոցով արժեքային համակարգի ձևավորումը աշակերտների մոտ: Այդ նպատակների իրականացումը ենթադրում է կոնկրետ խնդիրների լուծում, որոնք էլ ապահովում են աշխատանքի տրամաբանությունն ու կառուցվածքը:

Եվրախորհուրդը խրախուսում է բոլոր նրանց, ովքեր զբաղվում են լեզուների ուսուցման կազմակերպմամբ, իրենց աշխատանքում հիմնվելով սովորողների կարիքների, դրդապատճառների, ընդունակությունների և ներուժի վրա, ինչը ենրադրում է գտնել այնպիսի հարցերի պատասխաններ, ինչպիսիք են՝

1. Ի՞նչ կարող են անել սովորողները օտար լեզուներով:
2. Ի՞նչ պետք է սովորեն, որպեսզի կարողանան տվյալ լեզուն կիրառել իրենց նպատակին հասնելու համար:
3. Ի՞նչն է նրանց ստիպում սովորել:
4. Ինչպիսի՞ մարդիկ են սովորողները:
5. Ինչպիսի՞ գիտելիքներ, հմտություններ և փորձ ունեն նրանց ուսուցիչները:
6. Որքանո՞վ են հասանելի ուսումնական և տեղեկատվական նյութերը, տեսալսողական միջոցները, համակարգչային սարքերն ու ծրագրերը:
7. Որքա՞ն ժամանակ են սովորողները տրամադրում լեզվի ուսուցմանը:

Օտար լեզուն, որպես ուսումնական առարկա, նպաստում է սովորողների ընդհանուր կրթությանը, զարգացնում նրանց ճանաչողական կարողությունները, խոսքն ու մտածողությունը: Ուսանելով օտար լեզուններ աշակերտները ձեռք են բերում այդ լեզվով շփման և հաղորդակցման կարողություն: Լեզու սովորողը դառնում է բազմալեզու և զարգացնում է բազմամշակույթային իրազեկություններ:

Այս ամենը հնարավորություն են տալիս անհատին դառնալ ավելի զարգացած, հարուստ և ամբողջական անհատականություն: Մեծանում է լեզուներ սովորելու նրա ունակությունները, նա ավելի պատրաստական է դառնում նոր մշակույթի հետ շփման փորձառությունների համար: Սովորողները նաև հնարավորություն են ստանում բանավոր կամ գրավոր թարգմանության միջոցով միջնորդ դառնալ երկու տարբեր լեզուներով խոսող մարդկանց միջև, ովքեր չեն կարող ուղղակիորեն հաղորդակցվել:

Հայտնի է, որ կիրառվող լեզուն կարող է խիստ բազմազան լինել՝ ելնելով այն համատեքստի պահանջներից, որում օգտագործվում է: Այս առումով լեզուն չի կարող մտածողության չեզոք գործիք լինել, ինչպես մաթեմատիկան:

Հաղորդակցվելու կարիքն ու ցանկությունն ի հայտ են գալիս որոշակի իրավիճակում և հաղորդակցության ձևը, ինչպես նաև բովանդակությունը համապատասխանում են այդ իրավիճակին:

Գլուխ 1. Լեզվի օգտագործման ոլորտները

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնք թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է օրար լեզուների դերը:

Լեզվի օգտագործման յուրաքանչյուր գործողություն տեղի է ունենում որոշակի իրավիճակի համատեքստում, հանրային կյանքի ոլորտներից մեկում:

Այդ ոլորտների ընտրությունը, որոնցում գործելու համար պատրաստում են սովորողին, խիստ կարևոր նշանակություն ունի դասավանդման, ստուգման և գնահատման նյութերի համար իրավիճակներ, նպատակներ առաջադրանքների թեմաներ և տեքստեր ընտրելու գործում:

Սովորողները կարող են լեզվի կիրառման ներկա ոլորտների ընտրությունը մտքում կապել ապագա օգտակարության հետ, ինչն արդյունավետ դրդապատճառ կարող է լինել: Օրինակ՝ երեխաների համար լավ շարժառիթ կարող է լինել նրանց ուշադրության կենտրոնացումն այն հանգամանքի վրա, որ ներկա հետաքրքրությունների ոլորտի ընտրության արդյունքում ապագայում կարող են անպատրաստ լինել չափահասների միջավայրում հաղորդակցվելուն:

Չափահասների կրթության ընթացքում շահերի հակասություն կարող է ծագել գործատուների (որոնք ֆինանսավորում են դասընթացը և ակնկալում են կենտրոնացում մասնագիտական ոլորտի վրա) և ուսանողների միջև (որոնք ցանկանում են լեզու սովորել հիմնականում անձնական հարաբերությունների զարգացման նպատակով): Լեզվի կիրառման հնարավոր բնագավառների քանակն անսահման է, քանի որ գործունեության ցանկացած սահմանելի բնագավառ կարող է հետաքրքրության ոլորտ լինել այս կամ այն սովորողի կամ որոշակի դասընթացի համար:

Լեզուների ուսումնասիրության նպատակով օգտակար կարող է լինել առնվազն հետևյալ ոլորտների տարբերակումը։

- Անձնական ոլորտ
- Հանրային ոլորտ
- Մասնագիտական ոլորտ
- Կրթական ոլորտ

Պետք է նշել, որ շատ իրավիճակներում, կարող են մեկից ավելի ոլորտների ընդգրկված լինել։

Ուսուցիչների համար մասնագիտական և կրթական ոլորտները հիմնականում համատեղվում են։

Ժամանակակից լեզուն սովորելու և սովորեցնելու բազմաթիվ ուղիներ կան։ Տարիներ շարնակ Եվրախորհուրդը առաջ է քաշել մի մոտեցում, որը հիմնված է սովորողի հաղորդակցական կարիքների հաշվառման, ինչպես նաև նյութերի ու մեթոդների օգտագուրծման վրա, որոնք սովորողին հնարավորություն են տալիս ոչ միայն բավարարելու այդ կարծիքները, այլև համապատասխանում են իրենց, որպես սովորողների հատուկ կարծիքներին։

Համակարգի գործառույթը ոչ թէ լեզվի սովորեցնելն է որևէ մեկ կոնկրետ մեթոդիկայով, այլ ընտրության ազատությունը, այսինքն այլընտրանքներ առաջարկելը։

Կրթական բնագավառում օգտակար կարող է լինել տարբերակել մի կողմից այն առաջադրանքները, որոնք սովորողը, որպես լեզվի օգտագործող կարող է, պետք է աշխատի, մյուս կողմից այն առաջադրանքները, որոնք ուսումնական գործընթացի բաղկացուցիչ մասն են՝

1. Առաջադրանքների տեսակներ, օրինակ՝ իրավիճակների նմանակում, դերախաղ, փոխներգործություն դասարանում։
2. Ներմուծում, օրինակ՝ հրահանգներ, նյութեր,որոնք ընտրված կամ ստեղծված են ուսուցչի կամ սովորողի կողմից։
3. Դերեր, մասնակիցների դերը ինչպես բուն առաջադրանքների, այնպես էլ դրանց պլանավորման ու կատարման ընթացքում։

Լեզվի ուսումնասիրումն ու օգտագործումը խաղային նպատակով

Լեզվի օգտագործումը խաղային նպատակով հաճախ կարևոր գործոն է դառնում լեզուն սովորելու և զարգացնելու համար։ Սակայն այն չի սահմանափակվում կրթական ոլորտով։ Լեզուն խաղային նպատակներով սովորելու և տեղին օգտագործելու համար կարելի է օրինակ կիրառել լեզվական խմբային խաղեր, որոնք կարող են լինել

1. բանավոր (պատմվածքներ-ի՞նչ, ե՞րբ, որտե՞ղ)
2. գրավոր (պատմվածքների հորինում, տառախաղեր)
3. տեսալսողական (նկարներով լոտո)
4. սեղանի և քարտային խաղեր(բառախաղ,բառապաշար)
5. վանկախաղ, դիմախաղ-նմանակում

Խաղային ձևով լեզուն սովորելու օրինակ, որն շատ արդյունավետ օգտագործվում է դասաժամերին։

Զարգացնող խոսքային խաղ «Նկարներ-հանելուկներ».

Երեխաների խմբից ընտրվում է մեկ առաջնորդ, մնացածը նստում են աթոռների վրա, նրանք պետք է գուշակեն։ Ուսուցչուհին ունի մեծ տուփ, որը պարունակում է տարբեր առարկաներ պատկերող փոքր նկարներ (կարող եք օգտագործել նկարներ երեխաների լոտոյից)։

Վարորդը մոտենում է ուսուցչին և վերցնում նկարներից մեկը։ Առանց ցույց տալու մյուս երեխաներին, նա նկարագրում է դրա վրա նկարված առարկան։ Երեխաներն առաջարկում են իրենց տարբերակները.

Հաջորդ վարորդը նա է, ով առաջինը կռահեց ճիշտ պատասխանը։

Լեզվի օգտագործումը գեղագիտական նպատակներով

Լեզվի պատկերավոր և գեղարվեստական օգտագործումը կարևոր է թե՛ կրթական, և թե՛ հենց գեղագիտական նպատակներով։

Գեղագիտական գործունեությունը կարող է լինել արդյունավետ, ընկալողական, ինչպես նաև բանավոր կամ գրավոր, և հանդես է գալիս հետևյալ դրսևորումներով,

1. Երգի կատարում
2. Պատմվածքներ գրել և պատմել
3. Լսել կարդալ գրել երևակայական տեքստեր ծաղրանկարներ, պատմվածքներ
4. Գեղարվեստական տեքստերի վերարտադրում, ըմբռնում և կատարում, ինչպես նաև կարճ պատմվածքների հորինում։

Ժամանակակից լեզուների ուսումնառության իշխող բնագավառի այս ամփոփ ներկայացումը ավագ դպրոցում և բարձրագույն ուսումնական հաստատություններում կարող է պարզունակ ու թերի թվալ: Մինչդեռ այդպես չէ:

Ազգային և տարածաշրջանային գրականությունը մեծապես նպաստում է Եվրոպական մշակութային ժառանգության հարստացմանը:

Եվրախորհուրդը վերջինս համարում է արժեքավոր գանձ, որը պետք է պաշտպանել ու զարգացնել: Գրականության ուսումնասիրությունը ավելի շատ կրթական նպատակներ են ծառայում քան բուն գեղագիտականին:

Վերարտադրման գործունեություն և ռազմավարություններ

Վերարտադրման գործունեություն և ռազմավարությունները ընդգրկում են ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր գործունեությունը: Բանավոր վերարտադրման ժամանակ խոսողը ստեղծում է բանավոր տեքստ, որն ընկալվում է մեկ կամ մի քանի լսողների կողմից: Բնավոր խոսքի օրինակներ են.

1. Լսարանին հասցեագրված խոսքը
2. Տեքստի բարձրաձայն ընթերցում
3. Դերակատարում
4. Բանավոր վերարտադրություն

Գրավոր խոսքի ընթացքում լեզու օգտագործողը, սովորողը ստեղծում է գրավոր տեքստ, որն ընթերցվում է մեկ կամ մի քանի կարդացողների կողմից:

Գրավոր գործունեության օրինակներ են.

1. Լրացնել հարցաթերթիկներ
2. Գրել հոդված ամսագրերի թերթերի համար
3. Պատրաստել հայտարարություններ
4. Գրել ստեղծագործական տեքստ
5. Գրել անձնական և գործնական նամանկներ

Ընկալման գործունեություններ և ռազմավարություն

Ընկալման գործունեություններ և ռազմավարությունը նեռարում են լսողական և ընթերցման գրծունեություններ։

Լսողական ընկալման գործունեության դեպքում լեզու օգտագործողը ստանում և մշակում է մեկ կամ մի քանի խոսողների կեղմից արտաբերված բանավոր խոսքը։

Լսողական գործունեությունն ընդգրկում է.

1. Հսարակական հայտարարություններ
1. ԶԼՄ լսելը (ռադիո, հեռուստացույց, ձայնագրություններ)
2. Որպես հանդիսատես լսելը (թատրոն, դասախոսություն)

Յուրաքանչյուր դեպքում լեզու սովորողը կարող է լսել.

- Սեփական հաճույքի համար
- Յուրահատուկ տեղեկատվություն ստանալու համար
- Մանրամասն հասկանալու նպատակով

Տեսողական ընկալման ժամանակ լեզու սովորողը լսողական և տեսողական ազդակները ստանում է միաժամանակ։

Դրանք են `

1. Բարձրաձայն ընթերցանության ժամանակ տեքստին հետևելը
2. Հեռուստացույց, տեսահոլովակ, կինոնկար դիտելը
3. Նոր տեխնոլոգիաի օգտագործումը (լազերային սկավառակներ,կրիչներ)

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստուգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնք թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարբաժանելու մայրենի և օտար լեզուների նշանակությունը սույն խնդրի առնչությամբ:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր

է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն:

Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն

ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «…Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են

տալիս իրենց ետևից»[1]:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»[2]:

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը մի ջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն:

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝

[1] Տես՝ Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ., 22 էջ:

[2] Տես՝ նույն տեղում, 64 էջ:

Գլուխ 2. Փոխներգործության ռազմավարություններ

Լեզվական փոխներգործությունը ներառում է թե՛ ընկալման ու վերարտադրման, թե՛ համատեղ կապակցված խոսք կառուցելու համար անհրաժեշտ առանձնահատուկ

գործողությունները, ուստի ընկալման ու վերարտադրման վերոհիշյալ բոլոր ռազմավարությունները առնչվում են նաև փոխներգործությանը։

Բնավոր փոխներգործությունը կամ երկխոսությունը սովորաբար տեղի է ունենում իրական ժամանակի մեջ և ենթադրում է զրուցակիցների կողմից իմաստի համատեղ ստեղծում։ Նրանք կառուցում են ընդհանուր իմաստային համատեքստ՝ սահմանելով, թե ինչն է արդեն հայտնի, թե որքանով մտերմիկ կարող է լինել զրույցը կամ սահմանելով ու պահելով փոխադարձաբար ընդունելի տարածություն։

Միջնորդող խոսքային գործունեություն

Միջնորդող խոսքային գործունեության ժամանակ խոսողն իր սեփական մտքերը չի արտահայտում։ Նա պարզապես միջնորդի դեր է ստանձնում զրուցակիցներ միջև որոնք իվիճակի չեն անմիջականորեն հասկանալ միմյանց, սրանք սովորաբար տարբեր լեզուներով խոսողներն են լինում։

Միջնորդող խոսքային գործունեությունը ներառում է թե՛ բանավոր, թե՛ գրավոր թարգմանությունը, ինչպես նաև նույն լեզվով տեքստերի ամփոփումն ու վերաձևակերպումը, երբ բնագիր տեքստի լեզուն հասկանալի չէ լսողի համար։

Հաղորդակցական գործունեություն

Որպեսզի սովորողը կարողանա հանդես գալ որպես խոսող, գրող, լսող կամ ընթերցող, նա պետք է ի վիճակի լինի վարժ կատարել մի շարք գործողություններ։

Խոսելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Պլանավորել և կառուցել որոշակի հաղորդագրություն
2. Ձևակերպել որարշակի լեզվական ասույթ
3. Արտաբերել որոշակի լեզվական ասույթ

Գրելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Կարուցել և ձևակերպել որոշակի հաղորդագրություն
2. Գրել կամ մեքենագրել տեքստը։

Լսելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Ընկալել խոսքը
2. Ճանաչել հաղորդագրությունը

3. Հասկանալ հաղորդագրությունը

Ընթերցելու համար սովորողը պետք է կարողանա

1. Ընկալել գրավոր տեքստը
2. Ճանաչել և ըմբռնել հաղորդագրությունը
3. Հասկանալ հաղորդագրությունը
4. Մեկնաբանել հաղորդագրությունը:

Տեքստերը և գործունեության տեսակները

Խոսքային գործունեության արդյունքը տեքստն է, որն արտասանելու կամ գրելու պահից իսկ դառնում է որոշակի արդյունք, որը փոխանցվում է տարբեր միջոցներով և անկախ է իր ստեղծողից: Այնուհետև տեքստը խոսքի ընկալման գործընթացում հանդես է գալիս որպես ներմուծվող տեղեկատվություն:

Խոսքային գործունեության բոլոր ձևերը՝ ստեղծումը, ընկալումը և միջնորդությունը տեղի են ունենում ժամանակի մեջ:

Բանավոր խոսքի իրական ժամանակայի բնույթը դրսևորվում է ինչպես խոսելու, լսելու ժամանակ, այնպես էլ ինքնին դրանց փոխանցման ձևերի մեջ:

Բառապաշարի իրազեկություն: Բառապաշարային տարրերն ընդգրկում են կայուն բառակապակցություններ, որոնք բաղկացած են մի քանի բառերից, որոնք սովորում և օգտագործում են որպես մի ամբողջություն:

Քերականական իրազեկություն: Քերականական իրազեկությունը կարելի է սահմանել որպես լեզվի քերականական պաշարների գիտելիք և նրանց օգտագործման կարողություն: Անհրաժեշտության դեպքում՝ բառիմաստը կամ քերականական նյութը բացատրելու նպատակով մայրենի լեզվի օգտագործումը չի արգելվում: Դպրոցն ավարտած յուրաքանչյուր աշակերտի համար նվազագույն մակարդակի ապահովումը պարտադիր է:

Աշակերտները պետք է կարողանան ձեռք բերած խոսաքային կարողություններն ու հմտությունները, լեզվական և երկրագիտական գիտելիքները գործնականում կիրառել ինչպես անմիջական խոսելու ժամանակ, այնպես էլ միջնորդավորված՝ գրավոր կամ ձայնագրված տեքստի միջոցով:

Ստացում է, որ ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիրակչական կամ արժեաքյին և ընդհանուր զարգացման խնդիրներ։ Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիրակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում։

Եզրակացություն

Օտար լեզուն հանրակրթական մյուս առարկաների նման կոչված է իրագործել իր առաքելությունը՝ համամարդկային արժեքների փոխանցումը երիտասարդ սերնդին։
Օտար լեզուն լինելով իր լեզվակիր ժողովրդի մշակույթի էական տարրը և այլ ժողովուրդներին այդ մշակույթը փոխանցոլու միջոց, նպաստում է աշխարհի ամբողջական պատկերի ձևավորմանը, ժողովուրդների փոխըմբռնմանը և փոխհարստացմանը։

Օտար լեզուների իմացությունը ընձեռում է նաև լայն հնարավորություններ օգտվելու տեղեկատվության անսպառ աղբյուրներից՝ համացանց, մասնագիտական գրականություն և այլն։

Դպրոցականներին սովորեցնելով կարդալ, ունկնդրել, խոսել և գրել օտար լեզուներով, թարգմանել մի լեզվից մյուսը, մենք հարթում ենք նրանց ճանապարհը դեպի այլ ազգային մշակույթներ և դրանց միջոցով դեպի համաշխարհային մշակույթ։ Հնարավորություն ենք ընձեռնում հաղորդակցվել այլ ազգերի հետ՝ միավորելու համար ջանքերը՝ հանուն երկրի վրա խաղաղության և կյանքի պահպանման։

Մենք՝ օտար լեզուներ դասավանդողներս, քաջ գիտակցում ենք, որ «ժողովուրդը մեծ է, երբ կարդալ գիտե», իսկ երբ օտար լեզուներ գիտե, ապա նրա մեծությունը կրկնապատկվում և եռապատկվում է։

Ուրեմն պետք է էլ ավելի մեծ եռանդով ներդնենք մեր ուժերն ու ջանքերը, մեր գիտելիքները օտար լեզուների ուսուցմանն ու տարածմանը՝ դնելով այդ ուսուցումը ամուր հիմքերի վրա՝ հասցնելով այն մեծ բարձունքների։
Այդ առաքելությունը հայրենասիրության յուրահատուկ դրսևորում է։
Հայրենասիրությունը ոչ միայն հայապահպանումն է հայեցի դաստիարակությունը, հայերենի խոր իմացությունն է այլ նաև օտար լեզուների դասավանդումը բարձունքի վրա դնելու ու այն նվիրյալ աշխատանքով ահպանելը։

Գրականության ցանկ

1. Բաբանսկի Յու. -Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում։
2. Մուդրիիկ Ա. Վ. -Դպրոցականի անձը և նրա դաստիրակությունը կոլեկտիվում - Երևան 1986
3. Մանասյան Ն., Հանրակրթության արժեքային համակարգը, «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2004թ., N1/2, էջ 6-15
4. Педагогика, под. ред. Ю. К. Бабанского, С. Нойнера и др., М., 1978.
5. Я. Корчак, Избранные педагогические произведения, М., 1979.